ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

---------

Սիրեցեալ Եղբայր Մեր,

Աստուծոյ ողորմութեամբ վերստին վիճակւում է Մեզ մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի հրաշալի ծնունդը աւետել Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Թող Սուրբ Ծննդեան շնորհները առատապէս իջնեն մեր եկեղեցիների եւ մեր հաւատաւոր ժողովրդի վրայ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, որպէսզի երկնառաք այդ շնորհներով առաւել լուսաւորուի կեանքի ճանապարհը մեր ազգի զաւակների, որոնք, մանաւանդ մեր մայր հայրենիքում տագնապալի այս օրերին, իրենց հոգու հայեացքը յառած դէպի երկինք, աղօթում են որ հնչի ժամը իրենց արդար սպասումների իրականացման:

Չի հաւատում ենք թէ բարձրեալն Աստուած իւր Միածին Որդւոյ շնորհներով « Արար զօրութիւն բազկաւ իւրով . . . քակեաց զհզօրս յաթոռոց եւ բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ եւ զմեծատունս արձակեաց ունայնս » /Ղուկ. Ա. 51–53/:

Սուրբ ծննդեան տօների առթիւ Միածնաէջ Մայր Տաճարից յղում ենք Մեր սիրոյ ողջոյնը եւ հայրապետական օրհնութիւնը Ձերդ Ամենապատուութեան, Ս. Աթոռիդ տիրախնամ միաբանութեան եւ համայն հաւատացեալ ձեր ժողովրդեան:

« Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն »: ամէն:

Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց